

## ՊԱՐԵՏԻ ՈՐՈՇՈՒՄ N 62

2 մայիսի, 2020 թվական


### ՄԻ ՇԱՐՔ ՏՆՏԵՍՎԱՐՈՂՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԻՐԱՌՎՈՂ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 16-ի N°298-Ն որոշման 2-րդ, 6-րդ և 7-րդ կետերով և որոշման հավելվածի 20-րդ կետով, հաշվի առնելով Պարետի՝ 2020 թվականի մարտի 20-ի N°Յ/17-2020 ցուցումը և 2020 թվականի մարտի 31-ի N°27 որոշումը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի ղեկավարի՝ 2020 թվականի ապրիլի 17-ի N1033-Ա, 2020 թվականի ապրիլի 20-ի N 1064-Ա, 2020 թվականի ապրիլի 22-ի N 1127-Ա, 2020 թվականի ապրիլի 27-ի N 1205-Ա, 2020 թվականի ապրիլի 29-ի N 1217-Ա հրամանների հիման վրա 2020 թվականի ապրիլի 28-ին և 29-ին իրականացված մշտադիտարկումների արդյունքում կազմված արձանագրությունները՝

1. 24 ժամով արգելել հետևյալ տնտեսվարողներին պատկանող մասնաճյուղերի (հասցեներում իրականացվող) գործունեության ծավալումը՝
  - 1) «Բիդեք» ՍՊԸ, ՀՀ Կոտայքի մարզ, Վերին Պտղնի 1-ին փողոց 2/1.
  - 2) «Ֆրոնտիկ Պեպանյան» Ա/Ձ, ք. Երևան, Ազատամարտիկների 78/11.
  - 3) «Օպտիմ Պլյուս» ՍՊԸ, ք. Երևան, Տիգրան Մեծի պող. 52/43.
  - 4) «Լուսինե Նազարյան» Ա/Ձ, ք.Կապան, Դ. Բեկի 8 շ.
  - 5) «Ճամբարակ ՃՇՇՁ» ԲԲԸ, ք. Ճամբարակ, Գարդմանի 6:
2. Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի ղեկավար Հակոբ Ավագյանին՝ ապահովել տնտեսվարողներին սույն որոշման մասին տեղեկացումը:
3. Տնտեսվարողի գործունեությունը արգելվում է տեղեկացման պահից:
4. Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետ Արման Սարգսյանին՝ ապահովել սույն որոշման 1-ին կետի պահանջների կատարման նկատմամբ ամբողջական վերահսկողությունը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

 Recoverable Signature

X 

---

VERIFIED OCSP 02/05/20 14:28:16 GMT+4

Signed by: AVINYAN TIGRAN 3802890590

Տ. ԱՎԻՆՅԱՆ